

Ատենադպիր վարդապետը հիւանդ էր՝ Յովնան կը կատարէր նորա պաշտօնը: Գաղտնի խօսք մը կար մէկուն տանելիք՝ Յովնանու կը յանձնուէր նոյն պաշտօնը: Դօրեղբօրս տղաքը վտանգաւոր, անել ճամփու մը մէջ մտած էին՝ Յովնան կրնար գիրենք հասել՝ ճողոպրել:— Մէկ մ'էլ յանկարծ օր ը խոր լռութիւն տիրեց Յովնանու անուան եւ անձին վրայ, որ անհետացաւ մէջտեղէն. բայց եթէ Յովնան միայն անհետանար զարմանք չէր՝ այլ միեւնոյն ժամանակ հօրեղբօրս աղջիկներէն սրամիտն ու ծնողաց սիրականը Վասկանուշ, Յունաց սահմանները կ'ուղարկուէր կուսանաց վանքի մը մէջ իւր կեանքը մաշեցնելու: Ամէնուն զարմանք պատճառեց այս դիպուածը բացի ինձմէ. վասնզի ես գիտէի թէ Բագրատունի Օրիորդը եւ Յովնան իրար կը սիրէին, եւ մէկ քանի անգամ իրենց տեսութեան ներկա գտնուեցայ ծաղկանոցին մէջ, ուր գիշերները ժամադիր էին իրար տեսնելու համար այդ երկու սիրահարները: Դետեւանքը սարսափելի երեւցաւ ինձ, յորդորեցի Վասկանուշ մոռնալ այս սերը, հեռացնել իրմէ այս երիտասարդը, որ թեպէտ ամեհի առիւծ բայց նորա քով ամենախոնարհ եւ քծուն շուն էր. իսկ Օրիորդը թէեւ իրաւացի կը գտներ իմ խորհուրդս բայց սրտին սիրածէն բաժնուիր շատ դժուար էր. ուստի, երբ յանկարծ այս աքսորները լսեցի չի զարմացայ, այլ դառնացայ՝ մանաւանդ երբ այս դիպուածէն վերջ հօրեղբօրս հրաւերին հնազանդելու համար գնացի եւ տեսայ, որ զակին հետ ինքն էլ պատժուէր էր եւ երեք ամսու միջոցին մէջ ժամանակէն առաջ ծերացեր էր: Խեղճ հայր, զիս զակին պէս կը սիրէր՝ իւր զակին սիրոյն համար՝ վասնզի գիտէր թէ նորա շատ սիրական էի եւ կերպարանք էլ նման. յանձն կառնուր հալիլ, մաշիլ, զաւակն սպաննել եւ ինքն էլ մեռնիլ, որպէսզի իւր յիմար ազնուատոհմական ամբարտաւանութենէն բան մը զոհած չլինի: Երթալէս քանի մը օր վերջը, զիս տարաւ նոյն ծաղկոցը ժամտեղ Օրիորդին սիրոյն վայրկեաններուն. շրջան մ'ըրիւնք մէկտեղ. եւ այն խիստ մարդը, յանկարծ թուլցաւ, արտասուքը գետօրէն աչքերէն իջեցնելով, «Թշուառ հայր եմ ես, Դոմիսիմէ՛, ողբա՛ իմ վրաս», ըսաւ: Իսկ ես նոյն վայրկենին, երբ առանց անմեղադիր ընելու իմ բարեկամուհիս, խնդրել համարձակեցայ, որ բաւական համարի եղած պատուհասը, թոյլ մարդը գազան դարձաւ,